ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն)

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով՝

ա) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի կերպափոխման, էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման) և բաշխման գործունեություն իրականացնող անձանց, տեխնոլոգիական և կենցաղային նպատակներով էլեկտրական, ջերմային էներգիա և բնական գազ սպառողների (այսուհետ՝ սպառողներ) էներգատեղակայանքներում տեխնիկական ստուգումների, ինչպես նաև սպառման էներգետիկական ցանցերի շահագործման և սպասարկման գործունեություն իրականացնող անձանց մոտ ստուգումների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները, ստուգումների միջոցով իրականացվող պետական տեխնիկական վերահսկողության խնդիրներն ու շրջանակները.

բ) սահմանվում են էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ու սպառողների, ինչպես նաև էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի իրավասությունները:

(1-ին հոդվածը խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն)

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

տեխնիկական ստուգումներ՝ էներգատեղակայանքների փաստացի տեխնիկական վիճակի, կատարված կառուցման, վերակառուցման և հավաքակցման աշխատանքների ու նախագծի համապատասխանության հաստատման նպատակով իրականացվող ակնադիտական, ինչպես նաև ~~տեխնիկական կանոնակարգերով~~ տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված նորմերին էներգատեղակայանքների համապատասխանությունը հաստատող փորձարկումների ու չափումների փաստաթղթերի ուսումնասիրություններ.

պետական տեխնիկական վերահսկողություն՝սույն օրենքով նախատեսված դեպքերում տեխնիկական ստուգումների միջոցով վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող գործընթաց, որն ուղղված է էներգատեղակայանքների գործարկման ժամանակ, ինչպես նաև շահագործման, սպասարկման ընթացքում և տեղի ունեցած պատահարների դեպքում ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի նորմերի պահանջների խախտումների հայտնաբերմանն ու դրանց վերացմանը.

էներգատեղակայանքներ՝~~տեխնիկական կանոնակարգերով~~ տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված էլեկտրական մեքենաների, սարքերի, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի, ենթակայանների, գազային, ջերմային կարգավորիչ ու բաշխիչ հանգույցների և այլ սարքավորումների համախումբ, որոնք նախատեսված են էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի կերպափոխման, էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման և սպառման համար.

վերակառուցվող էներգատեղակայանք՝գործող էներգատեղակայանք, որտեղ լրացուցիչ էլեկտրասարքավորումների տեղադրման ու հավաքակցման և (կամ) էներգատեղակայանքի հանգույցի ապահավաքակցման կամ փոխարինման արդյունքում տեխնիկական անձնագրի, տեխնիկական պայմանների, նախագծի փոփոխության անհրաժեշտություն է առաջացել.

գործարկման եզրակացություն՝~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի նորմերին էներգատեղակայանքների համապատասխանությունը հաստատող փաստաթուղթ, որը տալիս է պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը և հավաստում էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձի կամ սպառողի էներգատեղակայանքների՝ տվյալ պահին գործարկմանը պատրաստ լինելու մասին.

պատահար՝ էներգատեղակայանքների բնականոն աշխատանքի խաթարում, այդ թվում՝ մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին վնասի պատճառմամբ: Պատահարների դասակարգումը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(2-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-372-Ն)

Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների վրա:

(3-րդ հոդվածը փոփ. 08.12.05 ՀՕ-1-Ն)

Հոդված 4. էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության խնդիրները

(վերնագիրը խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն)

էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության խնդիրներն են՝

ա) մարդկանց կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ ~~տեխնիկական կանոնակարգերով~~ տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով ~~և օրենսդրական այլ ակտերով~~ սահմանված անվտանգության նորմերի պահպանման ապահովումը.

բ) էներգետիկայի բնագավառի մեջ մտնող համակարգերի հուսալիության և անվտանգության ապահովումը:

(4-րդ հոդվածը խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն)

Հոդված 5. Պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմինը

(վերնագիրը խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն)

էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողությունն իրականացնում է վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին)՝ օրենքով սահմանված իր իրավասության շրջանակներում:

(5-րդ հոդվածը խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-372-Ն)

Հոդված 6. Տեսչական մարմնի գործառույթները

(վերնագիրը փոփ. 09.07.20 ՀՕ-372-Ն)

1. Տեսչական մարմինը՝

ա) էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների էներգատեղակայանքներում կատարում է տեխնիկական ստուգումներ, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ՝

- էլեկտրաէներգետիկական համակարգում՝ 110 կՎ և բարձր լարման, գազամատակարարման համակարգում՝ գազի միջին և բարձր ճնշման էներգատեղակայանքներում, համակարգերի հուսալիության և անվտանգության չափանիշների պահպանման նպատակով,

- մինչև 110 կՎ լարման էլեկտրաէներգետիկական, 5.8 ՄՎտ-ից բարձր դրվածքային հզորության ջերմամատակարարման և ցածր ճնշման գազի համակարգերում՝ էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց մոտ՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջների, ինչպես նաև պատահարների տարեկան վերլուծության, քաղաքացիներից, իրավաբանական անձանցից ստացված դիմումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրավոր տեղեկատվությունների ուսումնասիրությունների արդյունքում կատարված վերլուծությունների արդյունքներով, էներգատեղակայանքների շահագործումն ու կառավարումն իրականացնող անձանց հետ համատեղ, մարդկանց կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ ~~տեխնիկական կանոնակարգերով~~ տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված նորմերի կատարումն ապահովելու նպատակով.

բ) էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների էներգատեղակայանքների տեխնիկական ստուգումների արդյունքներով, ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջների խախտումներ հայտնաբերելիս, կազմում է ակտ-կարգադրագրեր, վերահսկում

դրանցում նշված պահանջների կատարումը և կայացնում որոշում՝ սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման մասին.

գ) տեխնիկական ստուգումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տալիս է 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական, 5.8 ՄՎտ-ից բարձր դրվածքային հզորության ջերմամատակարարման, ինչպես նաև միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություններ՝ թույլատրելով դրանց գործարկումը.

դ) վարում է ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի նորմերի խախտումների վերաբերյալ վիճակագրություն և կատարում դրանց վերլուծությունը.

ե) ներկայացնում է առաջարկություններ նոր ~~տեխնիկական կանոնակարգեր~~ տեխնիկական կանոնակարգեր և նորմատիվ իրավական այլ ակտեր - ընդունելու կամ գործող ~~տեխնիկական կանոնակարգերում~~ տեխնիկական կանոնակարգերում և նորմատիվ իրավական այլ ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

2. Տեսչական մարմինը էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, իրականացնում է դրանց մասնագիտական քննությունը ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի նորմերի խախտման բացահայտման և համապատասխան եզրակացություն կազմելու նպատակով:

(6-րդ հոդվածը փոփ., խմբ. 08.12.05 ՀՕ-1-Ն, խմբ., փոփ., լրաց. 09.04.07 ՀՕ-162-Ն, փոփ., լրաց. 09.07.20 ՀՕ-372-Ն)

Հոդված 7. Տեխնիկական ստուգումների կարգը

1. էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ու սպառողների էներգատեղակայանքներում տեխնիկական ստուգումները կատարվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

2. Նոր կառուցված, վերակառուցված, ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի խախտմամբ պայմանավորված շահագործման դադարեցումից հետո վերագործարկվող էներգատեղակայանքի տեխնիկական ստուգման ընթացքում տեսչական մարմնի ներկայացուցիչը շահագործող անձնակազմից կարող է պահանջել էներգատեղակայանքի առանձին հանգույցների փորձարկման իրականացում:

3. Նոր կառուցված, վերակառուցված, ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով - խախտմամբ պայմանավորված շահագործման դադարեցումից հետո վերագործարկվող էներգատեղակայանքների գործարկումն իրականացվում է ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին էներգատեղակայանքի համապատասխանության մասին տրված գործարկման եզրակացության առկայության դեպքում:

4. Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների քննության արդյունքում տեսչական մարմնի կազմած ակտ-կարգադրագիրը պետք է ներառի պատահարի ծագման պատճառների, զարգացման և հետագա ընթացքի վերաբերյալ մասնագիտական գնահատականներ:

(7-րդ հոդվածը փոփ. 08.12.05 ՀՕ-1-Ն, 09.07.20 ՀՕ-372-Ն)

Հոդված 8. էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների իրավունքներն ու պարտականությունները

(վերնագիրը փոփ. 08.12.05 ՀՕ-1-Ն)

1. Էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք ու սպառողներն իրավունք ունեն տեսչական մարմնի պետական տեխնիկական վերահսկողության իրականացմամբ պայմանավորված գործողությունները բողոքարկելու վերադասության կամ դատական կարգով:

2. Էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք ու սպառողները պարտավոր են՝

ա) թույլատրել տեսչական մարմնի ներկայացուցիչների մուտքը էներգատեղակայանքներ՝ սույն օրենքով նախատեսված տեխնիկական ստուգումներ իրականացնելու համար.

բ) տեսչական մարմնի տված կարգադրագրերի համաձայն և դրանցում նշված ժամկետներում իրականացնել միջոցառումներ՝ ուղղված տեխնիկական ստուգումների արդյունքում հայտնաբերված ~~տեխնիկական կանոնակարգերի~~ տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով նորմերի խախտումների վերացմանը.

գ) ինքնուրույն կամ տեսչական մարմնի տված կարգադրագրի համաձայն անհապաղ դադարեցնել այն էներգատեղակայանքների (հանգույցների) շահագործումը, որոնց ընթացիկ տեխնիկական վիճակն սպառնում է մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին.

դ) չգործարկել էներգատեղակայանքը՝ մինչև տեսչական մարմնից գործարկման եզրակացություն ստանալը:

3. Էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք պատահարի դեպքում պարտավոր են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտնել տեսչական մարմնին:

(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 08.12.05 ՀՕ-1-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-372-Ն)

Հոդված 9. Պատասխանատվության միջոցները

1. Սույն օրենքի և ~~տեխնիկական կանոնակարգերով~~ տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված նորմերի պահանջները խախտելու համար էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ու սպառողների համար սահմանվում են պատասխանատվության հետևյալ միջոցները՝

ա) նախազգուշացում.

բ) էներգատեղակայանքի (հանգույցի) շահագործման դադարեցում.

գ) տուգանք:

2. ~~Տեխնիկական կանոնակարգերով~~ Տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված նորմերի խախտում հայտնաբերելու դեպքում տեսչական մարմնի անձնակազմը կիրառում է «ա» կետում նշված պատասխանատվության միջոցը: Եթե էներգատեղակայանքի (հանգույցի) տեխնիկական վիճակը կարող է պատահարի առաջացման պատճառ դառնալ ու սպառնալ մարդկանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին, տեսչական մարմնի ծառայողը կիրառում է «բ» կետով սահմանված պատասխանատվության միջոցը՝ մեկ օրվա ընթացքում զեկույց ներկայացնելով իր անմիջական ղեկավարությանը՝ կատարած գործողությունների հիմնավորմամբ:

Տեսչական մարմնի (ստորաբաժանման) ղեկավարը կիրառում է «գ» կետում նշված պատասխանատվության միջոցը:

3. Լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների մասին տեղեկատվությունը տեսչական մարմինը ներկայացնում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ կիրառման օրվանից տասն օրվա ընթացքում:

(9-րդ հոդվածը փոփ. 08.12.05 ՀՕ-1-Ն, 09.07.20 ՀՕ-372-Ն)

Հոդված 10. Տեսչական մարմնի պատասխանատվությունը

(վերնագիրը փոփ. 09.07.20 ՀՕ-372-Ն)

Տեսչական մարմինն իր գործողությունների համար պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

(10-րդ հոդվածը փոփ. 09.07.20 ՀՕ-372-Ն)

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2005 թ. հունվարի 13
Երևան
ՀՕ-36-Ն